

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 4/2Ա

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Ք.Երևան
Ժ.11.00

05 հոկտեմբերի 2010թ.

Մասնակցում էին՝ Երևանի ավագանու 43 անդամներ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Գ. Բեգլարյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը, աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զ. Առաքելյանը, աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ. Նիկոյանը, աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետ Է. Թումանյանը, աշխատակազմի Երևանի ավագանու գործունեությունն ապահովող աշխատանքների կազմակերպման բաժնի պետ Գ. Բաղդասարյանը:

Քաղաքապետ Գ. Բեգլարյանը տեղեկացրեց, որ համաձայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 14-ի հ.8-Ա որոշման համաձայն Երևանի ավագանու «Հայաստանի Հանրապետական» խմբակցության ընտրական ցուցակի «Մսրյան Վլադիմիր Իվանի» բառերը փոխարինել «Հովհաննիսյան Արթուր Մարգարետունու» բառերով, 2010 թվականի սեպտեմբերի 22-ի հ.9-Ա որոշման համաձայն Երևանի ավագանու «Բարգավաճ Հայաստան» խմբակցության ընտրական ցուցակի «Վարդանյան Արման Ռազմիկի» և «Մասունյան Սուրեն Ռաֆայելի» բառերը փոխարինել «Կարապետյան Հովհաննես Հարությունի» և «Հովսեփյան Հրայր Սվյատոսլավի» բառերով:

Քաղաքապետ Գ. Բեգլարյանը ներկայացրեց Երևանի ավագանու 2010 թվականի հոկտեմբերի 5-ի արտահերթ նիստի օրակարգը.

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի հ.56-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
2. Երևան քաղաքի Տեղյան փողոցն Աբովյան պուրակին միացնող փողոցն անվանակոչելու մասին:
3. Սամվել Պետրոսյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին:
4. Գաբրիել Ջեմբերջյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին:

1. **ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի հ.56-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեի մասին» N 56-Ն որոշման NN 2, 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն համապատասխանաբար NN 1, 2, 3 և 4 հավելվածների:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 43
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

2. ԼՍԵՑԻՆ – Երևան քաղաքի Տերյան փողոցն Աբովյան պուրակին միացնող փողոցն անվանակոչելու մասին:

Երևանի քաղաքապետ Գ. Բեգլարյանի առաջարկությամբ հարցը հանվել է օրակարգից:

3.ԼՍԵՑԻՆ – Սամվել Պետրոսյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» փակ բաժնետիրական ընկերության աշխատակից, էլեկտրական գնացքի մեքենավար Սամվել Պետրոսյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 43
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

4. ԼՍԵՑԻՆ – Գաբրիել Ջեմբերջյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի պատվավոր նախագահ, սիրիահայ գործարար, բարերար Գաբրիել Ջեմբերջյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 43
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Երևանի քաղաքապետ Գ. Բեգլարյանը Երևանի ավագանու անդամներին տեղեկացրեց, որ ս/թ. հոկտեմբերի 22-ին կայանալիք նիստի ընթացքում քաղաքապետի տեղակալները և քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները կպատասխանեն Երևանի ավագանու անդամների բանավոր հարցերին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Արձանագրեց՝
Ն. Ղուկասյանը